ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2017թ. մարտի 6-ին կնքված N «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4» ծածկագրով՝ Պետության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

ք.Երևան

«09» «մարտի» 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արամ Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Շին նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Փառանձեմ Սուքիասյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 2017 թվականի մարտի 6-ին կնքված N «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4» ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4 կետով, ինչպես նաև հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 07.03.2017թ. նախագծային փաստաթղթերի մշակման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ եզրակացությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում «ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ ՍՋ «N» զ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման, ՍՋ «N» զ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման, «Մ» վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման ավարտի ժամկետի ավարտ սյունակներում «10.03.2017թ» թվերը փոխարինել «10.04.2017թ» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
2.2. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է 2017 թվականի մարտի 6-ին Կողմերի միջև կնքված N «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4» ծածկագրով պետական գնման Պայմանագրի անբաժանելի մասը:
2.3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3 հ/հ **900011301067** **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** *ՀՎՀՀ 02565827* **Աշխատակազմի ղեկավար** _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	**« Շին նախագիծ» ՍՊԸ** Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Բուրաստան, Զարենցի 2 հ/հ **2479929399490000** **«Արդշինբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2» մ/ճ** **ՀՎՀՀ 04225682** **Տնօրեն** _____ Փ. Սուքիասյան (ստորագրություն) Կ.Տ.